Բուղղի[1] տիրոջը նշանակեց Բուղղի վերայ, Ջիրիկիրանի տիրոջը իւր տէրութեան վերայ կառավարիչ, հաստատեց Ջաբալ-ալ-Քարաքի[2] իշխաններին իրանց հողերի վերայ եւ խաղաղութիւն կապեց նոցա հետ՝ իրան հարկ տալու պայմանով:

Հայաստան Պարսից ձեռքումն էր մինչ իսլամի երեւալը. այն ժամանակ շատերը թողին իրանց ամրոցները եւ քաղաքները Սիսականում, այնպէս որ երկիրը ամայացաւ: Ապա Խազարք եւ Յոյնք տիրեցին, ինչ որ առաջ նոցա ձեռքումն էր. պատմում են, որ Յունաց հողերը մի ժամանակ ցիր-ցան էին եւ նոցա կառավարիչները անկախ իշխանների գիրք ընդունած, որոնցից մէկը՝ Արմենեակոս՝ իրան թագաւոր հրատարակեց: Նորա մահից յետ կառավարեց երկիրը նորա կինը, որ կը կրէր Քալի անունը. նա շինեց Կարին քաղաքը եւ անուանեց Քալիքալա, որ կը նշանակէ "Քալիի բարի գործ„. դռներից մէկի վերայ նա հրամայեց իրան նկարել: Արաբացիք Քալի անուանն արաբական ձեւ տուին եւ կ'ասէին՝ Քալիքալայ:[3]

Երբ Օսման որդի Աֆֆանի խալիֆ եղաւ՝

քաջագոյնք կը հանդիսանան: Սակայն Լէկզիները առաւել բազմաթիւ են եւ նոցա աշխարհը աւելի ընդարձակ է: Նոցանից վերեւ կը բնակին Ֆիլանք, որոնց գաւառը մեծ չէ:„

1 Բուխա գաւառ ի Տայս:

2 Կովկասի լեռների մասին (ի բաց թողած Պրոմեթէոսի աւանդութիւնն) առաջին անգամ կը յիշէ Հերոդոտ. "Կասպից ծովի արեւմտեան կողմից կը տարածւի Կովկաս, որ ընդարձակութեամբ բոլոր լեռներից մեծագոյնն եւ բարձրութեամբ բարձրագոյնն կը հանդիսանայ. (վերան) կը բնակին բազմաթիւ եւ պէսպէս ցեղեր, որոնք գրեթէ բոլորը անտառի վայրի ծառերից կը կերակրին (I, 203):

3 Հատուածս գեղեցիկ օրինակ կը ծառայէ, թէ ինչպէս ամէն ազգի պատմագրեր կը ջանան մութ աշխարհագրական անուններ ինչ ինչ հնուց հերոսների հաշւով մեկնել, որոնք յաճախ երբէք գոյութիւն չեն ունեցած: Օրինակները բազմաթիւ են եւ մեզանում: